

Եղուարդ Հովհաննիսյան

1826-1828 թթ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ (ըստ «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի») ¹

Քանալի բառեր. Ղարաբաղ (Արցախ), ռուս-պարսկական պատերազմ, հայ ժողովուրդ, ակտիվ մասնակցություն, հայրենի երկիր, ազատագրում, վավերագրեր, զեկուցագրեր:

1826 թ. ամռանը սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, և պատահական չէր, որ այն սկսվեց հենց Ղարաբաղից. պարսկական զորքերը 1826 թ. հուլիսին պաշարում են Շուշիի բերդը: Ռուսական «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» նշանավոր աղբյուրագիտական ժողովածուն² ռուս-պարսկական պատերազմի Ղարաբաղյան ճակատի ռազմական գործողությունների մասին բազում փաստաթղթեր է պարունակում, որոնք նոր երանգ են հաղորդում մինչ օրս պատմագիտությանը հայտնի փաստերին:

Հնագրական հանձնաժողովի վավերագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ռուսական հրամանատարությանը մտահոգող առաջնահերթ հարցը տեղի ժողովուրդների աջակցության խնդիրն է եղել: Մեջբերում ենք Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար Ալեքսեյ Երմոլովին ուղղված գեներալ Մադաթովի 1826 թվականի սեպտեմբերի 22-ի զեկուցագրից. «Ղարաբաղի մարզում տիրող իրավիճակի մասին ես չհասցրեցի անհրաժեշտ տեղեկություններ հավաքել, սակայն տեղեկացնում եմ, որ Շամխորում և Ելիզավետպոլում պարսկական զորքերի կրկնակի ջախջախումից Աբաս-Միրզան այն աստիճան սարսափի մեջ է, որ չի կարող անգամ մտածել Շուշիի հետագա պաշարման մասին, ուստի անհապաղ դադարեցրել է պաշարումը և իր մնացած զորքի հետ միասին օգնության է շտապում իր որդուն՝ Մամեդ-Միրզային»³: Որքանով նկատելի է զեկուցագրից, այն ինչի մասին հաղորդում է Մադաթովը, արդեն իրականություն էր և նույնիսկ ռուսների համար սպասելի: Մեր խնդիրն, իհարկե, Աբաս-Միրզայի փախուստի մասին տեղեկացնելը չէ. «Ցանկանալով գոնե փոքր-ինչ մեղմացնել իր խայտառակ փախուստը, - ասվում էր այնուհետև զեկուցագրում, - Աբաս-Միրզան հրամայել է փախստական Մեհտի Ղուլի խանին 600 շահսեվենցիների հետ միասին անցնել սահմանը, ինչը խանգարելու համար ես շրջաբերականներ եմ ուղարկել մեր զորքերին, որում ներկայացրել եմ այդ խայտառակ դավաճանությունը...»⁴:

Զեկույցը, որին հետագայում հավանություն տվեց Կովկասի կառավարչապետը, իր բնույթով բոլորովին այլ, մեր կարծիքով նույնիսկ որակապես նոր իրավիճակ էր արձանագրում Ղարաբաղում. «Վերջապես ցանկանում եմ անցնել մահալների բեկերի (գավառապետների՝ Է.Հ.) ընտրությանը և **գլխավորապես պետք է ընտրենք հայերից** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.), քանի որ մահմեդական բեկերը գրեթե ամբողջովին դավաճանեցին մեզ և գնդապետ Ռեուտի կողմից բանտարկվել են, սակայն վերջիններիս որդիները, որոնք ներկայացել էին Աբաս-Միրզային և մասնակցել եգերական 42-րդ գնդի 3-րդ գումարտակի ոչնչացմանը... դեռևս ազատության մեջ են...: Նրանք Աբաս-Միրզայի դիմավորումը «նշել» էին մեր գյուղերի և տների հրկիզումով, դրանով ցույց տալով իրենց հավատարմությունը Աբաս-Միրզային: Սակայն նույն կերպ էլ դիմավորեցին ինձ

¹ Հոդվածը տպագրվում է «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր -2018» մրցույթի շրջանակում:

² «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» ժողովածուն (Акты археографической комиссии Кавказа (АКАК) հրատարակվել է Թիֆլիսում, 1866-1904թթ. տասներկու (վեցերորդ հատորը բաղկացած է երկու մասից) հատորով:

³ Акты собранные кавказской археографической комиссией. Угунітենі` АКАК, Тифлис, 1875, том т. VI, ч. II, Документ 1326. Рапорт кн. Мадатова ген. Ермолову, от 22-го сентября 1826 года, N 116, с. 867.

⁴ Նույն տեղում:

և հայտնեցին Ռուսական կառավարության հանդեպ տածած իրենց հավատարմության մասին...»¹: Այդուհանդերձ, Վ. Մադաթովը ևս ռուսական պաշտոնյա էր և ստիպված էր կեղծ սիրալիրություն ցույց տալ նրանց, չնայած այն հանգամանքին, ինչպես հայտնում էր զեկույցում, «ցաք ու ցրիվ էին արել իմ մոր և հոր գերեզմանը: ... ցույց տալով, որ ինձ հայտնի են նրանց կատարած գազանությունները, ես սիրալիրությամբ ընդունեցի նրանց... սակայն ես կազմել եմ անհնազանդների ցուցակը, որոնք մասնակցել են ռուսների և հայերի արյունահեղությանը... որպեսզի առհավետ վերջ տրվի այդ չարագործություններին և մեր մարզը մաքրվի ներքին թշնամուց (ընդգծումը մերն է՝ Է.Հ.) և տիրի հավերժ հանգստություն ու լռություն»²:

Գլխավոր հրամանատարին ուղղված զեկուցագրում Վ. Մադաթովն անդրադարձել է նաև Ղարաբաղի հայերի կողմից ռուսական զորքերին ցուցաբերած նվիրվածությանը. «Ինչ վերաբերում է հայերին, որոնք պաշտպանում էին բերդը, պարտք են համարում հայտնել Ձեզ, որ նրանց ծառայությունն արժանի է ուշադրության, քանի որ նրանք բոլորն էլ աչքի են ընկել քաջությամբ, դիմացել են բազմաթիվ դժվարությունների և թշնամու գրոհները ետ էին մղում խիզախորեն և չնայած պարենի անբավարարությանը, երբեք չմտածեցին բերդը հանձնելու մասին, երբ սովը դարձել էր անտանելի...»³: Երկու օր անց կառավարչապետ Երմոլովին ներկայացրած զեկուցագրում Վ. Մադաթովը կրկին անդրադառնում է Ղարաբաղի հայությանը. «Սպասվող աշնանացանի կապակցությամբ Ղարաբաղի հայերը, որոնք պաշտպանեցին Շուշիի բերդը, ինձ դիմել են խնդրանքով, որ բացի նրանից, որ իրենց ունեցվածքը թալանվել է թշնամու կողմից և զրկվել են անասուններից, սակայն, որպես մեզ հավատարիմ մարդիկ, գնդապետ Ռեուտը նրանցից վերցրել է բոլոր անասունները՝ Շուշիի կայազորի համար և... անդորրագրեր է տվել վերցրած անասունների դիմաց, ուստի խնդրում են գումար տրամադրել իրենց՝ նոր անասուններ գնելու համար, որ սկսեն աշնանացանի աշխատանքները, որպեսզի հաջորդ տարի սովի չմատնվեն»⁴:

Ջեկուցագրի վերջում կրկին փաստելով, որ Ղարաբաղի հայերն իրենց ողջ ունեցվածքը զոհաբերել են ռուսական բանակին, Վ. Մադաթովն այնուհետև գրում է. «...խնդրում եմ Ձեր թույլտվությունը՝ բավարարելու նրանց արդարացի խնդրանքը»⁵: Եվ, իհարկե, Ա. Երմոլովից սպասվող արձագանքը չուշացավ. Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատարը նախ և առաջ, ընդգծված գայրույթով է գրում Ղարաբաղի թաթար բեկերի և նրանց ժառանգների մասին. «Շուշիում բանտարկված բեկերին հրամայեք պահել խստագույն ձևով, մինչև նրանց վարքագծի շուրջ իմ ընդունելիք որոշումը: Ռուստամ բեկին (որը ժամանակին շնորհների էր արժանացել նույն Ա. Երմոլովի կողմից՝ Է.Հ.), ով հատուկ դիրք ունի թաթար բեկերի շրջանում և նրա որդուն, ով, անկասկած, իր հոր համաձայնությամբ առաջինը դավաճանեց մեզ և կարող է օրինակ հանդիսանալ մյուսների համար, զրկեք ողջ ունեցվածքից և հայտարարեք նրան կախաղանի արժան: Քաղաքում եղած նրա տունը գրավեք և այնտեղ տեղավորեք զորքը: Նրա տան առգրավումը կատարեք վկաների ներկայությամբ, որպեսզի հետագայում մեզ չմեղադրեն թալանի մեջ...»⁶:

Վ. Մադաթովին ուղղված Ա. Երմոլովի հանձնարարականում հայերին վերաբերող ուշագրավ մանրամաս կա. «Բոլոր բեկերից (բնականաբար, մահմեդական՝ Է.Հ.),- գրում է կառավարչապետը,- ետ վերցրեք հայկական գյուղերը և բնակիչներին հայտարարեք, որ նրանք այսուհետ գտնվում են պետական իրավասության ներքո՝ ի նշանավորումն նրանց հավատարմության և մեր կայսեր հանդեպ ցուցաբերած անսասան նվիրվա-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 868:

⁴ Նույն տեղում, Документ 1327. Рапорт кн. Мадатова ген. Ермолову, от 24-го сентября 1826 года, N 121, с. 868.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, Документ 1328. Предписание ген. Ермолова ген.-л. кн. Мадатову, от 29-го сентября 1826 года, N 400, с. 868.

ծության: Տեղեկացրեք նաև, որ շուտով կբարելավվի նրանց վիճակը և մեծ եռանդ կարթնացնի՝ մեր կառավարությանը ամեն տեսակի օգնություն ցույց տալու համար»¹:

Դատելով Ա. Երմոլովի հանձնարարականից՝ դժվար չէ հանգել այն եզրակացության, որ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը դարձավ այն հանգրվանը, ուր սահմանազատվեց ռուսական կառավարության քաղաքականությունը Ղարաբաղի հարցում: Ռուսների համար ակնհայտ դարձավ, որ Ղարաբաղի թաթար բնակչությունը վստահության առումով այս տարածաշրջանում իրենց համար այլևս անուղղելի տարր են: Մյուս կողմից, եթե նախկինում ռուսական հրամանատարների զեկուցագրերում փոքր-ինչ զգուշավորություն կար հայ բնակչության հանդեպ, ապա Շուշիի բերդի պաշտպանությունից հետո այդ վերաբերմունքի մեջ որակական փոփոխություն կատարվեց: Ռուսները հասկացան, որ իրենց համար Ղարաբաղում հավատարիմ դաշնակից կարող են լինել միմիայն հայերը: Եվ այն, որ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում այդօրինակ բովանդակությամբ փաստաթղթերը տեղ են գտել և հաջորդում են միմյանց, ասվածի աներկբա ապացույցն է: Ավելին, գլխավոր հրամանատար Ա. Երմոլովը Վ. Մադաթովին հրահանգում էր անմիջապես կալանքի տակ վերցնել և խստագույնս պատժել ազատության մեջ գտնվող բեկերի որդիներին. «Կազմել ցուցակներ և յուրաքանչյուրի ունեցած մեղքի չափով... բանտարկել Շուշիի բերդում: Ինձ տեղեկացրեք նաև, թե ո՞ր գյուղերն են նրանց պատկանել: Ընտրեք նոր դատավորներ, եթե բավարար չլինեն նրանց գործերը քննելու համար...»²:

Վ. Մադաթովին ուղղված նամակ-հանձնարարականում հայերին վերաբերող ևս մեկ ուշագրավ ընդգծում կար. «Իմ հաստատմանը ներկայացրեք գավառակների նայիբներին (գավառակապետներին՝ Է.Հ) և հրամայեք, որ ... հայերին նոր անհանգստությունների տեղիք չտան, նկատ ունենալով հայերի նկատմամբ մահմեդականների նախկին չարագործությունները»³: Այլ խոսքով՝ Կովկասի կառավարչապետը անուղղակիորեն փաստում է Ղարաբաղի մահմեդական իշխանավորների կողմից հայերի հանդեպ գործած չարագործությունների իրողությունը:

Անշուշտ, գեներալ Ա. Երմոլովի կառավարչապետության ժամանակաշրջանը դրական կարելի է համարել Ղարաբաղի հայության համար. դեռևս պատերազմի նախօրյակին՝ 1823 թ. մարտի 31-ին, Վ. Մադաթովին ուղղված հանձնարարականում Ա. Երմոլովը կարևոր է համարել մարզը նախկին բնակիչներով համալրելը. «Ես նախկինի պես այն կարծիքին եմ, որ Պարսկաստանից մեր կողմն անցնելու ցանկություն հայտնածներից, բացի Ղարաբաղի նախկին բնակիչներից (ընդգծումը մերն է՝ Է.Հ.) ուրիշ ոչ մեկի չընդունել, այլ խոսքով՝ բացառապես նրանց, ովքեր նստակյաց կյանք են վարում, այլ ոչ թե քոչվոր ժողովուրդներին, ինչպիսիք են շահսեվենցիները, չալաբիանները և նրանց նմանները»⁴, -ասվում էր կառավարչապետի հանձնարարականում: Ինչպես նկատում ենք, խոսքը բացառապես հայության մասին է, իսկ չթույլատրվածների առումով՝ թաթարական ծագումով բնակչության: Այլ խոսքով՝ Երմոլովը քաջ գիտակցել է մարզը հայերով բնակեցնելու առավելությունները՝ առաջին հերթին ռուսական արքունիքի շահերի տեսանկյունից: Մյուս կողմից՝ հանձնարարականում կրկին անգամ փաստվում է Արցախի բնիկ ժողովրդի Պարսկաստան բռնագաղթելու իրողությունը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Ղարաբաղին վերաբերող Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում աչքի է զարնում նաև ռուսական բանակին տեղի հայության կողմից ցույց տված լայն աջակցության փաստագրումը: Քաջ տիրապետելով տեղանքին՝ նրանք ոչ միայն ուղեկցողներ են ծառայել ռուսական բանակում, այլև բազմիցս ռուսական զորքերին դուրս են բերել պարսկական շրջապատումից: Բացի դրանից, լայն կապեր ունենալով հարևան մահմեդական մարզերում, նրանք կարևոր տեղեկություններ էին հաղորդում պարսկական զորքերի թվա-

¹ Նույն տեղում, էջ 868-869:

² Նույն տեղում, էջ 869:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, տ. VI, Կ. II, Документ 512. Предписание ген. Ермолова ген-м. Кн. Мадатову, от 31-го марта 1823 года, N 1, с. 275.

քանակի և տեղաշարժերի մասին: «Առևտրական գործերով սահմանային Նախիջևան քաղաքում գտնվող և երեկ Շուշի վերադարձած հայազգի առևտրական Մինաս Պետրոսովն ինձ հասցրեց արժանահավատ տեղեկություն, որը լսել էր իր հավատակիցներից, - գրում է մայր Չիլյակը գեներալ-մայոր Ա. Վեյամհինովին 1826 թ. հունիսի 25-ին ուղղված զեկուցագրում,- ...11 օր առաջ Կերբալայիների մոջահեդի ազգականը ժամանելով այնտեղ և մզկիթում հավաքելով մեծ քանակությամբ ժողովուրդ, Մահմեդ Բադիրխանի (Նախիջևանի խանն է՝ Է.Հ.) ներկայությամբ կարդացել է մոջահեդի ուղերձը մահմեդական հավատի հետևորդներին՝ համոզելով գեներալին ռուսների դեմ և ոչնչացնել նրանց գրաված բոլոր տարածքներում և որ ...աստված ինքն է մեզ կոչում Մուհամեդի հակառակորդների դեմ կռվելու համար...»¹:

Ռուս սպայի հաղորդագրությունում Ղարաբաղին վերաբերող ուշագրավ մեկ տեղեկություն էլ կա. «Մզկիթում հավաքված թաթարները, այս հրավերը համարելով լիովին արժանահավատ, պարտավորվեցին երդվել Ղուրանի առջև՝ իրենց չխնայել քրիստոնյաների հարցում և առաջին վրեժխնդրությունը ցույց տալ հենց Ղարաբաղում»²: Ուշագրավ է նաև, որ զեկուցագրի հեղինակը միանգամայն արժանահավատ է համարում հայազգի առևտրականի հաղորդած տեղեկությունները. «Այս լուրերն արժանահավատ են, քանի որ, ինչպես հայտնի է, պարսկական հոգևորականությունը հնուց ի վեր կարողացել է ժողովրդական դժգոհությունն ուղղել Ռուսաստանի կառավարության դեմ, ուստի ես պարտք եմ համարում այս ամենի մասին տեղեկացնել Ձեզ և միանալ ինձ հասած այս լուրերին»³, - գրում էր ռուս սպան:

Հնագրական հանձնաժողովի վավերագրերում տեղ գտած և գեներալ Ա. Վեյամհինովին ուղղված մայր Չիլյակի մեկ այլ զեկուցագրից էլ պարզ է դառնում, որ ռուսական հրամանատարությանը արժանահավատ և կարևոր տեղեկություններ հաղորդողները եղել են հենց Ղարաբաղի հայերը: Համաձայնվենք, որ նման գործողությունները բավականին վտանգավոր էին տեղի հայերի համար, քանի որ ամեն քայլափոխի կարող էին արժանանալ պարսկական հրամանատարության դաժան դատաստանին: Եվ այդուհանդերձ, վտանգելով իրենց կյանքը՝ Ղարաբաղի հայերը շարունակել են արժեքավոր տեղեկություններ հաղորդել ռուսական հրամանատարությանը. «Իմ կողմից պարսիկների մտադրությունների մասին հատուկ տեղեկանալու նպատակով Թավրիզ ուղարկված շուշեցի հայ Խաչատուր Պետրոսովը, - գրում էր նույն, - այժմ վերադարձել է և ինձ նամակ է բերել գեներալ-մայոր, իշխան Մենշիկովից (պատկերացնենք, թե ինչ պատժի կարժանանար նա, եթե Պարսկաստանում Ռուսաստանի դեսպանի նամակն ընկներ պարսիկ սարքագների ձեռքը՝ Է.Հ.): Իշխանի նամակը գաղտնի կերպով Թավրիզում նրան հանձնել է ռուսական առաքելության թարգման Նարիման Շահնազարովը (ևս մեկ վտանգված քայլ հայի կողմից՝ Է.Հ.): Վերջինս հորդորել էր նամակը շտապ կերպով հասցնել Ղարաբաղ և բավականին զգույշ լինել ճանապարհին, որպեսզի այն չընկնի պարսիկների ձեռքը և ինձ բառացի հայտնեց հետևյալ տեղեկությունները. Պարսկաստանում, իրոք, մեծ պատրաստություններ են տարվում պատերազմի համար և որ զորքերն ամենուրեք տեղակայված են և պատրաստ են առաջին հարվածը հասցնել Ղարաբաղին»⁴: Առավել ուշագրավը սակայն ռուս սպայի զեկուցագրի այս մասն է՝ «Բոլոր դավաճաններին, որոնք ժամանակին մեր կողմից Ղարաբաղից հեռացվել էին Պարսկաստան, հանձնարարված է ջոկատներ կազմել մեր դեմ կռվելու համար: **Ղարաբաղի և ողջ մահմեդական մարզերի բեկերը անընդհատ կապի մեջ են պարսկական կառավարության հետ և բոլորը հանդեպ մեզ պատրաստ են վրեժխնդրության** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.): Պարսիկները արևելյան սովորույթի համաձայն՝ նրանց ուղարկել են կանացի գլխաշոր և հագուստ՝ մեղադրելով նրանց

¹ Նույն տեղում, Документ 629. Рапорт майора Чилыева ген-л. Вельяминову, от 25-го июня 1826 года, N 23, Шуша, с. 347-348.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, Документ 632. Рапорт майора Чилыева ген-л. Вельяминову, от 1-го июля 1826 года, N 27, Шуша, с. 348.

⁴ Նույն տեղում:

վախկոտության մեջ, դրանով փորձելով համոզել նրանց մասնակից լինել իրենց հավատակիցների ազատագրմանը Ռուսաստանի ենթակայությունից»¹:

Որքանով նկատում ենք, Ղարաբաղի հայերի կողմից հասցված այս տեղեկությունները, այն էլ պատերազմական իրավիճակում, ռուսական հրամանատարության համար կարևոր արժեք ունեին և լիովին արժանահավատ էին. «Ինձ հասցրած լուրերը լիովին արժանահավատ են համարում, քանի որ արդեն սահմանի երկայնությամբ պարսկական զորքեր են տեղակայված, որոնք մեզ համար անբարենպաստ իրավիճակի ապացույցն են: Նույն կերպ էլ ես չեմ կասկածում այստեղի թաթար բնակչության ուխտադրության մեջ և թեպետ նրանք առերես հանգստություն են պահպանում, սակայն ես բոլոր հիմքերն ունեմ նրանց հանդեպ զգուշավորություն ցուցաբերելու... Ժամանակից շուտ ընդվզում չառաջացնելու համար: Շուշիում 60 զինվոր հերթով հսկում են բերդի շրջակայքը: Որպես զգուշավոր քայլ ես խնդրել եմ 42-րդ եգերական գնդի հրամանատար, գնդապետ Ռեուտին այստեղ տեղավորել Չանախչիից բերված ևս մեկ գումարտակ»², - փաստվում էր ռուս սպայի զեկուցագրում:

Իսկ թե ինչ նամակ էր հասցրել Պարսկաստանում ռուսական դեսպան Մենշկովից շուշեցի Խաչատուր Պետրոսյանը, տեղեկանում ենք այս փաստաթղթին անմիջապես հաջորդած և գեներալ Վելյամինովին ուղղված հետևյալ գրությունից. մեջբերում ենք Ղարաբաղին վերաբերող մասը. «**Ղարաբաղից Աբաս-Միրզային առաջարկ է արվել՝** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.) շրջապատել և գրավել Շուշին՝ մինչև պարսկական զորքերի հիմնական ուժերի ժամանումը: Այս առաջարկը ներկայացնողների անունները ես չկարողացա ճշտել. կասկածում եմ գավառակապետ Սեֆեր Ալի-բեկին պարսիկների հետ հարաբերություններ ունենալու մեջ և թե ինչպես էր նա շուշիով խոսում ֆեթի Ալի-խանի հետ սահմանի վրա, որի ականատեսն անձամբ եմ եղել: Նման առաջարկներ եղել են նաև Շաքիից, Բաքվից և Թալիշից...: Ընդհանրապես, բոլոր այս առաջարկները գալիս են մահմեդական տիրակալներից»³:

Նամակում մանրամասն նկարագրված էր նաև պարսկական զորքերի տեղաբաշխումը ողջ սահմանի երկայնությամբ. որտեղ և որքան զորք է կուտակված, որտեղից պետք է սպասել գլխավոր հարվածները և այդ ամենը՝ զորաքանակի մասին հստակ տեղեկատվությամբ⁴: Կարծում ենք, որ ներկայացված վավերագիրը լիովին հաստատում է մեր կողմից վերևում արված եզրակացությունը. հավելենք միայն, որ կարելի է անգամ կռահել, թե ինչ կարող էր պատահել, եթե այս նամակն ընկներ պարսիկների ձեռքը կամ թե հայազգի Խաչատուր Պետրոսյանը չկարողանար նամակը հասցնել գեներալ Վելյամինովին: Եվ ընդհանրապես, Խաչատուր Պետրոսյանի այս հերոսական արարքը միանգամայն արժանի է համեմատել Բայազետի 1877 թ. պաշտպանության ժամանակ Սամսոն Տեր-Պողոսյանի սխրանքի հետ, թեպետ մեր պատմագիտությունն այդ մասին անգամ փոքր հիշատակություն չունի: Ղառնալով այս նամակին, մեր ուշադրությունը գրավեց հատկապես վերջին տողերը. «Շահն ընդդիմանում է այս պատերազմին, սակայն մոլլաները մի կողմից նրան հուսադրում են անվերապահ հաջողության մեջ, մյուս կողմից, այդ ամենը նրա գանձարանից զգալի գումարներ դուրս հանելու և իրենց օգտին ծառայեցնելու համար է, եթե նույնիսկ պատերազմ չլինի»⁵:

Այդուհանդերձ, Կովկասի հնագրական հանձնաժողովի հրապարակած ռուս բարձրաստիճան պաշտոնյաների զեկուցագրերում շեշտվում է Ղարաբաղի մահմեդական բնակչության անթաքույց հակառուսական տրամադրությունները: Մեջբերում ենք կայսր Ալեքսանդրին ուղղված Կովկասի կառավարչապետի զեկուցագրից, որը թվագրված է 4 սեպտեմբերի 1826 թվական, այսինքն՝ մեկ օր անց Շամխորի նշանավոր ձակատամարտից. «Աբաս-Միրզայի կողմից Ելիզավետպոլ է ուղարկվել նախկին խանի որդին, որ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 349:

³ Նույն տեղում, Документ 633. Донесение кн. Меншикова ген-л. Вельяминову, от 2-го июля 1826 года, с. 349.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 350:

պեսզի բնակչության շրջանում ընդվզում առաջացնի: Պարսկական զորքերն այստեղ վերականգնել են նախկին խանի իշխանությունը, **սակայն բոլոր Հայերը, որոնք ապրում են մարզում, մեր կողմն են** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.): Ղարաբաղի թաթարները առաջինը դավաճանեցին մեզ: Փախստական խանը գտնվում էր պարսկական զորքի առջևում և այստեղ կարողացել էր ընդվզում կազմակերպել: Ուստի, երբ Աբաս-Միրզան ժամանեց այստեղ, իր զորքին բավականին մեծ ուժեր միացրեց, որին մեծապես նպաստեց նաև պարսիկների հետ վերջիններիս հավատի միասնությունը...»¹, -ասվում էր Երմոլովի գեկուցագրում:

Փաստորեն, դատելով գլխավոր հրամանատարի գեկուցագրից, մահմեդական նախկին բոլոր խանությունների թաթար բնակչությունը դավաճանել է ռուսներին և միայն հայերն են, որ հավատարիմ են եղել իրենց: Այս քաղվածքն էլ 1826 թվականի դեկտեմբերի 7-ին կայսր Ալեքսանդրին ուղղված Երմոլովի մեկ այլ գեկուցագրից է. «Գեներալ իշխան Մադաթովը հրամայեց եգերական 42-րդ գնդին տեղավորվել Արաքսին մոտ Խուդավերինի կամրջից վերև: Նրա հետ էր նաև Ղարաբաղի միլիցիան՝ կազմված հայկական հետևակից...»²: Հավելենք, որ նույնաբովանդակ փաստաթղթերը Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում բազմաթիվ են. մեջբերում ենք կառավարչապետ Երմոլովի 1827 թ. հունվարի 12-ի գեկուցագրից. «Ռուսական ջոկատը արագ թափով շարժվեց Ղարաբյուրտի կիրճով դեպի Սամբուրու գետը, որի մոտ տեղակայված էին Շահսեվենցիները, Աջալիները և մյուս ժողովուրդները (բոլորն էլ մահմեդական՝ Է.Հ.): Ռուսական զորքերի անակնկալ հարձակումը նրանց մոտ մեծ իրարանցում առաջացրեց: **Ղարաբաղի և Շիրվանի հեծելազորը, որը ամրացված էր Ղարաբաղի հայերով, հաջող հարձակում իրականացրեց...** (ընդգծումը մերն է՝ Է.Հ.) Մոտ 500 շահսեվենցիներ և Ղարաբաղի քոչվորներ ներկայացան մեղայականով և ուղարկվեցին Ղարաբաղ»³: Հաջորդ գեկուցագիրը. «...Հունվարի 1-ի (1827 թ. Է.Հ.) գիշերը մտնելով Միշկինի օկրուգ, Մադաթովը տեղեկացավ քոչվորների ժամանման մասին և նույն պահին այնտեղ ուղարկեց Ղարաբաղի և Շիրվանի հեծելազորին և Հայկական հետևակին...»⁴:

Ներկայացված քաղվածքները որքան էլ առերևույթ նկարագրում են պատերազմական իրավիճակներ, այդուհանդերձ, պատմագիտական առումով կարևոր տեղեկություններ են պարունակում: Նախ և առաջ՝ քաղվածքներից ակնհայտ է Ղարաբաղի հայության ակտիվ մասնակցությունը պատերազմական գործողություններին, այդ թվում նաև թաթար-մահմեդական տարրերի դեմ: Երկրորդ՝ որքանով հաստատում են գեկուցագրերը, Ղարաբաղի հայությունը պատերազմական այդ գործողություններին մասնակցել է թե՛ որպես հետևակ և թե՛ որպես հեծելազոր: Երրորդ՝ Ղարաբաղում ժամանակին բնակություն հաստատած, սակայն ռուսական զորքերի առաջխաղացումից անմիջապես հետո Ղարաբաղը լքած և սակայն տեղի բնակիչ անվան տակ հանդես եկող ժողովուրդները գեկուցագրերում ներկայացված են որպես քոչվորներ: Հավելենք նաև, որ թե՛ Ղարաբաղի խանը և թե՛ տեղի թաթար բնակչությունը Ղարաբաղը երբեք իրենց հայրենիքը չեն համարել. նրանք ցանկացած ժամանակ հեռացել են Պարսկաստան, թեպետ դրա համար որևէ պատճառ չեն ունեցել: 1827 թ. հունիսի 27-ին Կովկասյան կորպուսի շտաբի պետ Դիբիչին ուղղված Պասկևիչի գեկույցում այդ մասին ուղղակի է ասվում. «Ես խնդրում եմ ուշադրությամբ վերաբերվել... մարզի դրությանը (նկատի ունի Ղարաբաղը՝ Է.Հ.): Մինչ մեր զորքերի այստեղ ժամանելը՝ տասը օր առաջ, արդեն սկսվել էր տեղի բնակիչների գաղթը: Մի մասը փախել է, մյուսներին Սարդարը և նրա եղբայրը տարել են դեպի Արարատի կողմը՝ Բայազետ: Նրանց մի մասը հավաքվել է Հասան խանի դրոշի տակ և մեզ անհանգստացնում են իրենց ավազակություններով... Այս ցեղերի մեծ մասին Մեհտի Ղուլի խանը ստիպում է իր հետ միասին գնալ Ղարա-

¹ Նույն տեղում, Документ 675. Всеподданный рапорт ген. Ермолова, от 4-го сентября 1826 года, с. 372.

² Նույն տեղում, Документ 701. Всеподданный рапорт ген. Ермолова, от 7-го декабря 1826 года, с. 387.

³ Նույն տեղում, Документ 703. Всеподданный рапорт ген. Ермолова, от 12-го января 1827 года, с. 387.

⁴ Նույն տեղում, էջ 388:

բաղ... Կապը Ղարաբաղի հետ կհաստատվի, քանի որ ես շուտով կգնամ դեպի Նախիջևան»-ասվում էր Ի. Պասկևիչի գեկույցում¹:

Այսպիսով՝ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերը անվերապահորեն հաստատում են Ղարաբաղի հայության ակտիվ մասնակցությունը ռուս-պարսկական երկրորդ պատերազմին, ակնառու կերպով փաստվում է հայերի տեղաբնիկ հանդիսանալու հանգամանքը, իսկ թաթար բնակչությունը ներկայացվում է որպես քոչվոր ցեղ. էական այդ տարբերությունը չեն հասկանում կամ չեն ցանկանում ընդունել մեր հարևան երկրի պատմաբանները: Ի վերջո, եթե նույնիսկ այդ ցեղերն ապրել են ներկայիս Արցախի Հանրապետության տարածքում, ապա դա չի նշանակում, թե նրանք հանդիսացել են տեղաբնիկներ: Նրանք բնակիչներ են եղել, ինչպես ասում են այնքանով-որքանով. փաստ է, որ նրանք մշտապես տեղից-տեղ են քոչել, ինչպես թելադրել է քոչվորի իրենց կենսակերպը: Այս է իրականությունը և այդ իրողությունը աներկբա փաստում է «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» հեղինակավոր աղբյուրագիտական հավաքածուն:

Эдуард Оганесян, Русско-персидская война 1826-1828гг. в Карабахе в материалах «Акты Кавказской Археографической комиссии» (АКАК). Не случайно, что русско-персидская война 1826-1828 гг. началась именно с Карабаха: в июле 1826г. персидские войска окружили крепость Шуши. С первых дней войны карабахские армяне принимали деятельное участие в военных действиях, проходившее на территории Карабаха. Содержащие в Актах кавказской археографической комиссии (АКАК) архивные документы сообщают важные подробности этой помощи, подчеркивается большой вклад карабахских армян в победах русских войск и стремление армянского народа к освобождению своей родине.

Ключевые слова: Карабах (Арцах), русско-персидская война, армянский народ, активное участие, родная страна, освобождение, документы, рапорты.

Eduard Hovhannisyan, The Russian-Persian war of 1826-1828 in Karabakh on the materials of the «Acts of the Caucasian Archeographic Commission» (ACAC). Not a coincidence that Russian-Persian war of 1826-1828., started from Karabakh. In July 1826 the Persian army surrounded the fortress of Shushi. From the first days of the war, the Karabakh Armenians took an active part in the hostilities, which took place on the territory of Karabakh. Containing the Acts of the Caucasian Archeographic Commission (ACAC) archival documents reveal much of the details of this assistance, emphasize the great contribution of the Karabakh Armenians to the victories of Russian troops and the desire of the Armenian people to liberate their homeland.

Key words: Karabakh (Artsakh), russian-persian war, armenian people, active participant, motherland, liberation, documents, reports.

¹ Նույն տեղում, տ. VII, Тифлис, 1878. Документ 402. Рапорт ген. Паскевича гр. Дибичу, от 12-го июня 1827 года, N 62.- Эчмиадзин, с.454.